ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

26.01.2021թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Վ.Խաչատրյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Կ.Աշրաֆյանը, Ա.Մատինյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Ադլոյանը, Է.Հախվերդյանը, Ա.Սահակյանը, Ն.Համբարձումյանը, Մ.Սարգսյանը, Ա.Թումանյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Գասպարյանը- ստորաբաժանումների ղեկավարներ
Հ.Ավետիսյանը -մարզպետի խորհրդական
Ա.Հարությունյանը -մարզպետի խորհրդական
Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական
Տ.Հովսեփյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների նորանշանակ ղեկավարներին մարզպետարանի աշխատակազմին ներկայացնելու մասին

(Մարզպետ՝ Ա.Խաչատրյան)

2. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ երկու շաբաթների ընթացքում կատարված աշխատանքների մասին

(զեկ. մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Մխիթարյանին՝

Ներկայացնել առաջարկություններ Լոռու մարզի զոհված, վիրավոր և անհետ կորած զինծառայողների և նրանց ընտանիքների խնդիրների ուսումնասիրման, փոխհատուցումների տրամադրման և այլ աջակցությունների համակարգման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ռ.Պողոսյանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Կ.Աշրաֆյանին՝

Քննարկել և մինչև 01.02.2021թ. ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզի առողջապահական կազմակերպությունների ֆինանսական խնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Վ.Ղարսայանին, մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Է.Հախվերդյանին, Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Համատեղ քննարկումներ կազմակերպել և բազմակողմանի աջակցություն ցուցաբերել մարզպետարան ներկայացվող ներդրումային և զարգացման ծրագրերի կազմման և իրականացման ուղղությամբ:

1/26/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99